

# ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 բուլի. կէս տարւան 6 բուլ.  
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի եւ տօն օրերէր)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.  
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՈՐԾԱՐԱՐՈՒՄԸ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ձինաստանը իբրեւ վաճառանոց.—Ներքին  
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մորենի տեղից. Նա-  
մակ վաղարշապատից. Նամակ Խմբագրու-  
թեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-  
ԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—  
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—  
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ ցուցահանդէսից.

## ՁԻՆԱՍՏԱՆԸ ԻԲՐԵՒ ՎԱՃԱՌԱՆՈՑ

Անցեալ տարի Ամերիկայի Միացեալ-Նա-  
հանգներում տեղի ունեցաւ մի միջազգա-  
յին առևտրական ժողով, որի խորհրդակ-  
ցութեան զիսաւոր առարկաներից մէկն էր  
Ձինաստանը, իբրեւ վաճառանոց: Ամերիկա-  
կան ժողովը յայտնեց այն կարծիքը, որ  
Ձինաստանը պէտք է մատուցի ինչի բոլոր  
պետութիւնների նաւերի և վաճառական-  
ների համար, որ նա չը պէտք է ընկնի  
այս կամ այն պետութեան բացառիկ տրա-  
մադրութեան տակ, որ նա, մի խօսքով,  
պէտք է լինի այն, ինչ որ յայտնի է ա-  
զատ գոնէր բառերի անունով:

Այժմ այդ ազատ գոնէրի պետութեան  
մէջ տեղի ունի մի մեծ շարժում, որը ստա-  
ցել է մի անսովոր արտայայտութիւն: «Մեծ  
բուռնաց» կոչված մեծ կուսակցութիւնը,  
որի անդամների թիւը հասնում է մի քա-  
նի միլիոնների, զէնքի ոյժով արշաւանը-  
ներ է կատարում երկրի մէջ և արտաքին  
է տարածել ընդարձակ տարածութիւն-  
ների վրա: Ի՞նչ է դա, արդե՞ք մի ապշա-  
ստմունք: Ըստ երևոյթին ոչ: Որովհե-  
տեւ կառավարութիւնը ոչ միայն նրան չէ  
հալածում, այլ և կարծես պաշտպանում  
է: Արդե՞ք դա կառավարչական շրջանե-  
րի պատուիրած մի գործողութիւն է: Այո,  
որովհետեւ այն ժամանակ կառավարու-  
թիւնը ինքն իր զօրքերով կը գործադրէր  
այն ամենը, ինչ այժմ անում է յեղափո-  
խական մի մարմին: Իսկ այժմ նա միայն  
ցոյց է տալիս իր թուլութիւնը, անկարող  
լինելով իր հեղինակութեամբ գործել ար-  
ձակ համարձակ իր պետութեան մէջ:

Անկախած է մի բան, որ չինական կա-  
ռավարութեան ներքից կազմութեան հա-  
ձելի են այն հայեցակէտերը և այն  
սկզբունքները, որոնք գրված են «Մեծ բը-  
ռունցի» կուսակցութեան դրօշակի վրա,

այն է բոլոր օտարամուտութեան դէմ, ա-  
տեղութիւն դէպի այն ամենը, ինչ որ չի-  
նական չէ, ինչ որ բուրձրաբան չէ և ին-  
չեցնում է եւրօպական կարգերը և քրիստո-  
նէութիւնը: «Մեծ-բուռնացի» ընդարձակ  
շարժման մէջ, անտարակոյս, կան հիմնա-  
ւոր սոցիալական շարժումներ, անշուշտ  
այդտեղ մեծ դեր է կատարում եւրօպա-  
ցիների շահամոլ և հարստահարող քաղա-  
քականութիւնը Ձինաստանում, որի շնոր-  
հիւ ընդարձակ տարածութեան վրա ազ-  
դանալութիւնը աղքատանում է. սակայն  
ընդհանրապէս այդ շարժումը ընդունել է  
սխալ և անհամակրելի ուղղութիւն. նա  
դարձել է մի արշաւան եւրօպական կու-  
սուրայի և այլազգի տարբերի դէմ, ուստի  
և մատնել է ինքն իրան բնական մահվան:  
Եւրօպան իր մեծ պետութիւնների միա-  
ցած զօրքերով կանգնել է Ձինաստանի ա-  
ռաջ և պահանջում է զսպել հակաեւրօ-  
պական այդ շարժումը, այլապէս նա սպառ-  
նում է սեփական ոյժերով կարգ հաստա-  
տել այնտեղ, ուր սեփական կառավարու-  
թիւնը անընդունակ է հանդիսանում ա-  
պահովել իր մէջ ապրող ալազգիներին և  
խախտում է ազատ գոնէրի սկզբունքը:

Անարդար է և սխալ Ձինաստանը, երբ  
նա կուր է յայտնում եւրօպականու-  
թեան և եւրօպացիներին. բայց եւ-  
րօպացիներն էլ պէտք է լուրջ ուշա-  
գրութիւն դարձնեն չինական ժողովրդի  
դժգոհութեան արդար կոյժերի վրա և  
հիմնեն իրանց քաղաքականութիւնը տե-  
ղական ազգաբնակչութեան բարեկեցութեան  
և ոչ միայն իրանց սեփական շահերի վրա:  
Այլապէս ներքից շարժման նման յուզ-  
մունքները կարող են կրկնվել:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Մ Ա Մ Ո Ւ Լ

«Մշակի» մէջ մի քանի անգամ առիթ եղաւ  
յիշատակելու, որ ուսաց ծառուը վերջերում  
սկսել է արծարծել այն միտքը, թէ քահանայն  
չը պիտի նշանակվի հոգեւոր իշխանութեան  
կողմից, այլ պիտի ընտրվի ծխականների ա-  
զատ կամքով Այս առիթով «С. Петер. Вѣд.»  
լրագրի մէջ սկսվել է թեր և զէմ կարծիք-  
ների փոխանակութիւն, որ հետաքրքրական է

սովորութիւն է լինում, այդ թիւը 500 հազա-  
րից աւելի է լինում: Այդ ժամանակ ցուցա-  
հանդէսում տեղ-տեղ անցողաբար խնդրելու  
չափ դժուարանում է, չը նայելով հաղորդակ-  
ցութեան բազմաթիւ յարմարութիւններին:  
Այցելուներն առ այժմ Յրանախայն հարեան  
երկրներից են—անգլիացիներ, գերմանացի-  
ներ, ճօրագրացիներ, բելգիացիներ և այլն:  
Երբեմն յայտնվում են նաեւ միտաբարդ ուսա-  
նողական խմբեր, տուրիստներ, ինչպէս նաեւ  
խումբ-խումբ ճանապարհորդ օրիորդներ: Ի  
դէպ է յիշատակել նաեւ, որ մի քանի օր ա-  
ռաջ մի անգլիացի հարուստ գործարանատէր  
սեփական ծախքով յուշահանդէս էր ուղարկել  
ժող հազար բանւորներ: Պարիզի մամուլը ոգե-  
ւորութեամբ ողջունեց աշխատւորների այս  
գիտական ուսումնասիրութիւնը և իր համակ-  
րութիւնը յայտնեց գործարանատիրոջը՝ նրա  
մարդասէր վարմունքի համար:

Առ այժմ օտարականներից գուցէ աւելի  
բազմաթիւ լինեն ֆրանսիական գաւառացիներ-  
ը, որոնք այցելում են ցուցահանդէսը երբեմն  
աժողով ընդամենով: Սրանք վերցնում են ի-  
րանց հետ մի ամբողջ օրվայ պաշար, ներս են  
մտնում ցուցահանդէս և էլ չեն դուրս գալիս  
մինչեւ երեկոյ, որովհետեւ ամեն անգամ մուտ-  
քի նոր տոմսակ պիտի վերցնել: Ամբողջ օրը  
չըլուծւում են ցուցահանդէսի բոլոր մասերում,  
այնտեղ մի անկիւնում ուսում են հետնորի  
պաշարը ազա՛ն ճաշարանատէրերի կողմից  
տեղ աղատվելով, երեկոյեան ներկայ են լինում  
հրավարութեանը և միւս առաւօտ, գուցէ

նաեւ մեզ համար, քանի որ ընտրողական  
սկզբունքը մեր եկեղեցու մէջ գնալով ոչ թէ  
չէ զարգանում, այլ, կարող ենք ասել, չըն-  
վում է կղերական-կառայական նոր հոսանք-  
ների մէջ: Այսպէս, պ. Ն. Դուրնօլ, որ ընտ-  
րողական սկզբունքի կողմնակից է, պատաս-  
խանելով հակառակ կարծիք ունեցողներին,  
ասում է.

Հասարակ ժողովուրդը քիչ է ծանօթ ե-  
կեղեցու դաւանութիւններին և սկզբունք-  
ներին և եթէ նա մտնում է հերձուածների  
ու աղանդների մէջ, պատճառն այն է, որ  
կամենում է ազատվել այնպիսի հովուից, որ  
իր գործերով վրդովեցնում է ամբողջ ծու-  
լը, որ չէ կարողանում կամ չէ կամենում  
բաւարարութիւն տալ ծխի կրօնական պա-  
հանջներին: Մի կտոր հացի տիրանալու հա-  
տար կոթիլի է ստանալ ամեն տեսակ տեղեր,  
բայց ոչ թէ եկեղեցու հովիւների տեղերը,  
որովհետեւ հովիւը վարձկան չէ, չինքնիկ  
չէ և պիտի ծառայէ եկեղեցուն կոչմամբ,  
պիտի իր հօտի հետ տանէ վիշտը և ուրա-  
խութիւնը, բայց ոչ թէ իր նիւթական դրու-  
թեամբ և հարստութեամբ աչքի ընկնէ ու  
տեղից տեղ փոխվի, որոնքով հարուստ ծը-  
լեր և իր հօտը թողնելով ճակատագրի  
կամքին:

Ելմիւսմի հացաւտ տեղերի վրա սիրա-  
հարկած և այդ հացաւտութեան պատճառով  
ժողովրդական իրաւունքներն ոտնակոխ անող  
ստուռածաւառներին խորհուրդ կը տալինք  
ուշադրութեամբ հետեւել այս ևս սրա պէս  
ուրիշ գործաճնքներին: Կը կամենայինք, որ ա-  
մեն բանի մէջ նշանակվի պաշտօնայն որոնող  
մեր կղերականները հակադէմքին մեզ թէ ինչ  
օգուտ ունեն, հեռացնելով ժողովուրդը հոգե-  
ւորականութիւնից և վերջինիս դարձնելով մի  
փակաճ, տիրող կաստա. ինչո՞ւ ժողովրդական  
—ընտրողական սկզբունքը, որ քրիստոնէական  
առաջին դարերից մնացած մի լաւ կարգ է  
մեր եկեղեցու մէջ, յանկարծ, հազար տարի  
գործադրելուց յետոյ, համարվում է վնասակար  
և ոչնչացման արժանի: Կղերականութիւնը  
պարծենում է իր ստատիկ պահպանողականու-  
թեամբ: Բայց դա ճիշդ չէ: Կղեր պահպանող-  
ական է միայն այն գործերի վերաբերմամբ,  
որոնք իր շահերին են ծառայում: Եթէ այս-  
պէս չը լինէր, ընտրողական սկզբունքը, որ  
մեր լուսաւորված դարում ամեն տեղ միակ  
խնայի և գեղեցիկ սկզբունք է համարվում,  
չէր հալածվի մեր մէջ: Եւ որ ամենից զարմա-  
նային է, հալածողները չեն էլ հասկանում թէ  
ինչ ահագին պատասխանատուութիւն են յանձն

առնում պատմութեան առաջ, որ գիտէ պատ-  
ժել իր յաւիտենական զատավճիռներով:

Յայտնի է թէ ինչ գեղեցիկ տպաւորութիւն  
գործեց մեր մէջ հանգուցեալ Ենովք Բուդա-  
ղեանի կտակը: Կ. Պոլսի հայերը, որոնք տա-  
րիներէր ի վեր չեն գտնում իրանց մէջ մի  
փոքր ի շատէ առատաձեւ բարերար, ուսա-  
հայերից շատ են հիպոքրիտ Բուդաղեանի կար-  
գադրութիւններով: «Մասիս» շաբաթաթերթը  
գրում է.

Աշխարհական հոգեհանդիստ մըն ալ,—  
եթէ կը ներեն մեր կրօնական հայերը այս  
լրագրական բացատրութեան,—նոր գոցուող  
գերեզմանի մը առջեւ, այն կողմացի հա-  
յուն, որ հինգ հարիւր վաթսուս հազար  
բուլի կտակից մարդասիրական ու կրթական  
նպատակներու, փափագ յայտնելով որ իր  
տապանաքարը սա պարզ արձանագրութիւնը  
միայն կրէ: «Այստեղ հանգում է Շամսինցի  
Ենովք Բուդաղեանը: Այս ճշմարիտ փիլիսո-  
փան ու ճշմարիտ բարերարը, որ պոսիկ  
տապանաքար մը կուգէ իր հողակոյտին հա-  
մար ու անշուք յուղարկաւորութիւն մը իր  
թաղումին, բան մը չէ մոռցած իր կտակին  
մէջ,—Ելմիւսմի ու երուսաղէմը, Բագուի  
եկեղեցին ու Շամսինի աղբիւրը, յիշ կա-  
նանց ապաստանարան ու էփանագին ճաշա-  
րան, հիւանդանոց, բարեգործական ընկե-  
րութիւն. ու ամենէն վերջն ալ, 5000 բուլ-  
լի հայ զորագնացներուն օգնող ընկերու-  
թեան... Եթէ այդ տեսակ ընկերութիւն  
հաստատուի: Գրականութեան վրա մտածող  
այս մեծահարուստ հայը թերեւս մէկը ե-  
ղած ըլլայ անոնց, որոնք հազիւ ստորագրու-  
թիւն մը դնել ու պարզ ընթերցում մը սոր-  
ված են. և սակայն իրենց միլիոններու  
բախումին մէջովը կը մտածեն թէ գրա-  
դէտներն ալ ամէն հասարակ մահկանացուի  
պէս կրնան աղքատանալ—եթէ երբէք հարս-  
տացած ունին: Ու եթէ չըլլար իր թերահա-  
ւատութիւնը, իր տարակոյսը թէ «գրա-  
կանագէտներին օգնող ընկերութիւն» պիտի  
կազմուի, թերեւս 5000-ի տեղ 50,000 կա-  
կէր: Ենովք Բուդաղեանն ալ—դեռ երէկ ան-  
ծանօթ անուն մը մեզի համար—իր մահուն  
յաջորդ օրը կը ծանօթանայ ամբողջ ազգին,  
իբրեւ մէկը այն հասեալ, խոնարհ, անհո-  
սուկ մարդիկ, որոնք երտուն, քառուստ  
տարի կը տքնին, կաշխատին անընդհատ,  
չարքաշ կեննելով ու ծայրայից խնայողու-  
թեամբ ապրելով իրենց լիառատ շահերուն  
մէջտեղ, միակ խաղի մը համար,—հանրա-  
յին բարեգործութեան նպատակ իրենց մա-  
հէն կը վերջ:

Իսկ «Արեւելք» լրագիրը հետեւեալ խոր-  
հրդածութիւններն է անում.

հայրի պատասխանը պէտք է փնտռել հէնց  
Փրանսիայու ընտրութեան մէջ, ամեն ինչ  
հետաքրքիր, գրաւիչ դարձնելու նրա զարմա-  
նայի ընդունակութեան մէջ: Առհասարակ,  
ցուցահանդէսների այցելուներին կարելի է բա-  
ժանել երեք դասի. նախ նրանք, որոնք գալիս  
են զուտ գիտական նպատակներով, ուսումնա-  
սիրութիւնների համար ինչպէս զանազան մա-  
նագէտներ, գիտական ընկերութիւնների ներ-  
կայացուցիչներ: Ոմանք գալիս են բացառապէս  
կամ մեծ մասամբ վայելիքների, զուարճութիւն-  
ների համար, մարդիկ, որոնք բազմից ստացած  
առատ պարգեւը չը գիտեն ուր և ինչպէս  
վատնել, ոսկիների մէջ խնդրող ճանճրոյթը չը  
գիտեն ինչպէս փարատել. թուում է, որ արանք  
աւելի բազմաթիւ են, քան բոլոր միւսները,  
և սրանք առաջինն են վազում Պարիզ, ուր  
ամեն մի անկիւնը, ամեն բան նրանց զգալա-  
կանութիւնը չոյող հաճոյքներ, արբեցնող տե-  
սարաններ է ներկայացնում, մանաւանդ ցու-  
ցահանդէսի ժամանակ: Կայ այցելուների մի  
երրորդ դաս, որոնք համար հաւատարմապէս հե-  
տաքրքիր են և ուսանելին են զուարճալին. բո-  
լոր երկրներին ուսանող սերունդն է դա, որի  
կենսւնքն անցնում է տքնութեան և զուարճու-  
թեան անվերջ ժամերում, որ սովորում է և  
ուրախանում, ուրախանում է և սովորում: Եւ  
հետեւապէս ամեն մի ցուցահանդէս, որ անկա-  
րող կը լինի այս երեք դաս այցելուներին միա-  
ժամանակ բաւականութիւն տալ, այսինքն  
օգտակարը, ուսանելին համեմել զուարճու-  
թիւններով, յաճախողների քիչ թիւ կունե-



Իրաւ է որ այդ կտակէն ո եւ է ուղղակի օգուտ մը չենք վայելեր մենք արեւմտեան հայերու, բայց վերջապէս այն գեղեցիկ օրինակն իսկ որ անկէ կարտայայտւոյ, ինքնին մեծ օգտակարութիւն մը կրնայ ունենալ, պայմանաւ որ մեր հարուստները կարենան ըմբռնել այն դասը, որ անոր իւրաքանչիւր տրամադրութենէն կը ծորի Անօգնու յանկերգ, կրկնուած թերեւս հազար անգամներու եւ սակայն, օգտուած ըլլանք թէ ոչ, պատճառ մը չը կայ որ հիացում չը յայտնենք այդ շատերեցի նաւթատիրոջ վրա, որուն ձգած կտակին համար նոյն իսկ ուս մաս մուլը կը խոտովանի թէ նմանը չունի ոչ միայն Կովկասի հայ բնակչութեան, այլ եւ բովանդակ Ռուսիոյ մէջ, Արարիւն քիչ անգամ կը պատահի որ մասովը արձագանք ըլլայ նմանօրինակ կտակի մը: Սահմանափակ, առանձնացուած ու միախառնելի կտակ մը չէ ատ, ոչ ալ անպատեհ փառասիրութեան մը ծնունդ: Ընդհակառակը, եթէ երբեք ըլլօրէն թափանցելու ըլլանք Բուրգոնի կտակին տրամադրութեանց, պիտի տեսնենք թէ շատակեցի նաւթատէրը մի միայն իւր պարզ բարերար մը չի ներկայանար, այլ իւր մարդասէր մը որ կը նպատաւորէ ամեն տեսակ մարդիկ եւ ամեն տեսակ հաստատութիւն, առանց կրօնքի կամ ազգի խտրութեան: Մարդկայնութեան զմայլելի զգացում մը կը թեւածի այդ կտակին մէջ, որ գիտակցաբար կատարուած ուսումնասիրութեան մը արդիւնք կերեւայ, եւ որ տեսակէտով մը կը յիշեցնէ Զարիֆի կտակը, որոշուած նոյն մարդկայնութեամբ եւ մի եւ նոյն գիտակցի քննութեան արդիւնք: Եթէ չեմ սխալիր, մեր ցեղին մէջ այս առաջին անգամն է որ անհատ մը այսչափ ցայտուն կերպով կը գէ կանչին ազգայնականութեան բոլոր նախապաշտօնները, եւ իր ազգին պատկանած կարօտներն ու թշուառները սիրովիւ ետքը աչքը կը նետէ այն տեսակ կարօտներու վրա, որոնք հայ չեն թէ եւ բայց կը տառապին ազգատութենէ եւ կամ ազգքեր ունին զորս չեն կրնար գոհացնել իր նպատակաւորած շրջանակին բովանդակ բնակչութիւնը խոր ուսումնասիրութեան մը արդիւնք ըրած է, եւ երկար տարիներու տենչուտ գործունէութեան մը փորձառութեամբ կրցած է ըմբռնել անոր ամէնէն անհրաժեշտ պէտքերը: ու եթէ ոչ լիովին, գէթ բաւական զգալի կերպով յաջողած է գոցել գանձը:

Հայ հարուստները այսպիսի երախտագիտութեան կարող են արժանանալ, եթէ ճոխ սեղաններ, գիշերային օրգիւնների եւ հարստահարողական շահատակութիւնների մէջ մի մի կորոզման մտաբերել, որ անսահման ետամոլութիւնը եւ որովհետեւ պատկառութիւնը անէծքի եւ զգուշանքի առարկայ կը դարձնեն նրանց: Այդպիսով միայն կը բազմանայ մեր մէջ Բուրգոնիները թիւը...

ՄՈՐԵՆԻ ՏԵՂԻՑ

(Նամակ Շուշու գետուից)

Շուշու գետուի մեծագոյն մասը, գլխաւորապէս Վարանդան, դեռ չէր մոռացել այն սարափելի հարուստը, որ նա ստացաւ 1898—1899 թվականների կարգիւտից եւ երաշխից, եւ հաճախ ենթարկուում է այն բարբարոսա-

նայ եւ անպատճառ անախտ կը լինի Այն, ցաւալի է, որ մարդը շատ անգամ չէ կորուզանում գէթ ի սէր գիտութեան եւ գեղարվեստի մի առժամանակ մոռանալ իր մարմինը իրտ պահանջները, զգայական վայելքները, եւ ներկայիս առաջ մտադրելով կորուզած զուտ, անխառն, անպակաս առած մտադրելով քաղաքական վայելքներով միայն բաւականանալ Բայց ինչ արած, տաւրաղաղաբար, մարդը մարդ է ամեն տեղ. բարոյագէտ փիլիսոփաների անվերջ սխառմաները չը կարողացան նրանից հրեշտակներ պատրաստել, անսարմուն թեւաւոր գլուխներ, բանականութիւն միայն:

Փրանսիացիները երեւի շատ լաւ հասկացել են այս ճշմարտութիւնը. նրանք նկատել են, որ իր քաղաքակրթութեամբ հպարտ ժամանակակից մարդն անգամ երեւալի պէս յափշտակվում է շլացուելի իրերով, որ նա իր լրջութեան մէջ անգամ չէ մոռանում թեթեւ վայելքները, զգայական հաճութիւնները եւ հաճախ բաւականութիւն տալու համար Փրանսիացին աշխատում է այնպէս կազմակերպել իր ցուցահանդէսը, որ գիտականը, ուսմանին խառնված, համարված լինեն զուարճութիւններով, հաճութիւնով: Եւ եթէ աչքի տալ ունենանք, որ հէնց Փրանսիական բնաւորութեան մէջ թեթեւ ու լուրջ, գիտական ու զուարճական, անուշ հիւստի ու տրագիկ մեծութիւնը խառնված են իրար, այն ժամանակ միանգամայն հասկանալի կը դառնայ, թէ ինչու այդքան ընդունակ է Փրանսիացին հետաքրքրի դարձնել ամեն ինչ եւ մանաւանդ ցուցահան-

կան արշաւանքին, որ կատարեց մորեխը վերջին 2—3 շաբաթվա ընթացքում:

Դեռ դարձան սկզբում գիւղացիները մեծ բաւականութեամբ եւ լի յոյսերով նայում էին այս տարվա ցանքերի վրա, որոնք սովորականից աւելի առատ հունձ էին խոտատնում եւ ամեն մէկը տեսնում էր դրանց մէջ բնութեան առատութիւնը եւ մեծահոգութիւնը, որ կարծես թէ լինել էր այս տարի տոկոսով վերադարձնել գիւղացիներին այն ամենը, ինչ որ այս վերջին տարիները խել էր նրանցից զանազան պատահարների միջոցով: Բայց որքան խառնակ յոյսեր: Մայիսի սկզբում հեռու դաշտերից չարագուշակ լուրեր սկսեցին հասնել գիւղացու ախանջին, թէ մորեխ է երեւում: Սկզբում ոչ ոք չէր կամենում հաւատալ, թէ բնութիւնը գիւղացիներին այն ամենը, ինչ որ թողնի դուռ, այս տարի վերջին կը լինի, որ չի չարանքի պտուղները, բայց մորեխ երեւալու լուրը յաճախ կերպով տարածվեց եւ դարձաւ մի ճշմարտութիւն, որի առաջ խելձ գիւղական ազգաբնակիչները մնաց ընկճված: Միջոցներ ձեռք առնելու համար գաւառագետի կողմից, դուրս արին մորեխի տեղը իւրաքանչիւր ծխից մի բանուր եւ սկսվեց հին նախապետական կոխը—կոխ ցրտակերպ եւ փայտերով: Բայց միթէ այդ ձեռքով կարելի էր վերջ տալ այն անհամար բազմութեանը, որ ծածկել էր անազնի տարածութեան դաշտեր եւ որտեղ, ինչպէս ասում են, ասեղ գցելու տեղ չէր մնացել: որտեղով անցնում էր մորեխը, այնտեղ կարծես թէ ոչինչ չէ եղել բացի հողից. ամեն ինչ լափում էր, ամեն ինչ փչացնում: Սարսափ էր տիրել ամբողջ գաւառի ազգաբնակչութեան մէջ եւ ամենքը համոզված էին, որ այդ տեսակ կուռը երբեք չի վերջանալ մորեխը եւ իրանց փախչոյթած արտերը, իրանց յոյսն ու ապագան զոհ կը դառնան արտափելի թշնամու արշաւանքին:

Եւ այդպէս էլ եղաւ. 3 շաբաթ անընդհատ կուռուց յետոյ հզօր մարդը իր մեծ խելքով յաղթվեց փոքրիկ միջատների ձեռքից եւ յուսահատ լետ մղվեց, իսկ թշնամին յազգեցնելով բոլորներին իր գալլի խաղաղակը եւ իր առաջ չը տեսնելով այլ եւս ոչ մի խոչընդոտ, թեւաւորվեց եւ յաղթական «չարգան» նուագելով, թուա դէպի իր հայրենիքը—Արաքսի հովիտները, որպէս զի այդ ապահով տեղը թողնէ իր սերմը միւս տարվա արշաւանքի համար:

Մորեխի դէմ կուռում են թէ որտեղ է նա թողնում իր սերմը եւ ապա հաւաքում են եւ փրչացնում: Իսկապէս սա մի միջոց է, որ եթէ մի քանի տարի անընդհատ եւ բարեկեցօրէն շարունակվի, պէտք է կարծել, որ զգալի օգուտների կարող ենք հասնել: Բայց այդ ձեւով կուռել, ինչպէս ցոյց է տալիս իրականութիւնը, գոյություն ունի միայն գիւղական թղթերի վրա: Դուք, օրինակ, ամեն դարձան սկզբում կը տեսնէք գիւղական տանուտէրները մի մի հրաման ստացան՝ հաւաքել եւ ներկայացնել իւրաքանչիւր ծխից մի պուրջ մորեխի զէսը:

Ցուցահանդէսի զուարճութեան տեղերի կամ, ինչպէս ասում են Փրանսիացիները, attraction-ների մասին գրեթե ցանկութիւն չունեմ, դրանք չարծն էլ այդպէս աշխատանքի եւ ուշադրութեան հարկի միայն զէս մեղանշած չը լինելու համար, եւ երկրորդ, ինչպէս ասացի, ցուցահանդէսը իր աշխուժեամբ մասամբ հէնց այդ attraction-ներին է պարտական. դրանց թուղթի նկարագիրը միանալով ցուցահանդէսի աւելի հետաքրքրի, աւելի ուշադրաւ մասերի յաջորդ նկարագիրներին՝ իր ներկայացնել ցուցահանդէսն իր ամբողջ պատկերով եւ իսկական բնաւորութեամբ, որ իր վրա այնպէս կրում է Փրանսիական ազգային բնաւորութեան կնիքը:

Թողնենք դեռ այն, որ ցուցահանդէսի շատ լուրջ մասերում Փրանսիական նուրբ ճաշակի, հետաքրքրի դաստիարակութեան հետ երեւնի որ եւ է կերպով ներս է թափանցել նաեւ զգայական վայելքի մի տարր, այլ եւ կան բացառապէս հասարակութիւն գրաւելու, նրան վայելքներով շլացնելու համար նշանակված յատուկ հաստատութիւններ համարաւ իւրաքանչիւր քաղաքում: այնպէս որ ամբողջ ցուցահանդէսը իր շնորհիւներով, իր գանազան բաժիններով, իր ներկայացրած պատկերներով, իր դիմելի հրաշալիութեամբ կազմում է վերին աստիճանի հարամութեամբ եւ ճաշակով պատրաստված մի խառնուրդ, ուր ծիծաղելի ու լուրջը, զուարճալի եւ գիտական

սերմ Սկզբում դուք սպասում էք թէ չուտով կիրաւորվի այդ հրամանը, բայց մի քանի օր-ընթացի վրիզի «աղաղակալների» մէջ եւ մի այցելութիւն տանուտէրի կողմից «ուս հարկն է»—ի հարկէ հանդերձ «փափուկ նուէրներով» եւ ամեն ինչ վերջացած է: Եւ այդպէս ամեն տարի. «պրիկազ» տանուտէրներին՝ «հաւաքել եւ ներկայացնել» եւ «բապօրտ» գաւառագետներ, թէ «հաւաքվեց եւ փչացվեց», իսկ մայիս ամսում մորեխ գաւառի զանազան մասերում:

Մորեխը թեւաւորվեց եւ հեռացաւ, ինչպէս լուր մեզ, շատ հայաբնակ գիւղերի արտերը: Սակայն թշնամու հետանալը ուրախութիւն պատճառեց շատ յուսահատ արտերի, բայց դրանց ուրախութիւնը դարձաւ շատ կարճատև. եղաւ. մայիսեան կարկուտները մի շաբաթվա մէջ գաւառի զանազան մասերում փչացրին շատ քեղ գտեր եւ այգիներ՝ թէ թթի եւ թէ խաղողի:

Մի խօսքով, հարուստ հարուստի ետեւից այս վերջին տարիները մեր գիւղական ազգաբնակչութեան առանց այն էլ աննախանձելի տեսնանալան դրութիւնը կատարեալ քայքայման հասցրին:

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՑ

Յունիսի 5-ին

Վեհափառ Կաթողիկոսը 12 օրվա ճանապարհորդութիւնից վերադարձաւ Էջմիածին, այցելելով Եղուարը, Բջին, Սևան, Հնդրաբին, Ղարաբախ եւ Հաւիթի վանքերը: Անձրեւային եղանակների պատճառով չուտով վերադարձաւ, առանց այցելելու Սանահին վանքը եւ Մարցի անտառը:

Վերադարձից յետոյ, լսելով իր դիւանի գեւուցումը՝ հետեւեալ կարգադրութիւններն արաւ:—Թիֆլիսի առաջնորդին հրամայեց կատարել նոր ընտրութիւն ներսիսան զարդի հոգաբարձութեան, այժմանների ժամանակը լրացած լինելով: հոգաբարձուներ պիտի ընտրվեն ութ անձինք, վեցը քաղաքացիներից եւ երկուսը քաղաքի քահանաներից, անձնափոխանորդներ միայն վեց հոգի աշխարհականներից:

Կահակով հրամայեց Բագուի գործակալ Արսէն վարդապետին դնալ Շուշու եւ այնտեղի հոգաբարձական ընտրութիւն կատարել, իբրեւ ներկայացուցիչ հոգեւոր իշխանութեան:

Կոնստանդնուպոլիսի Շուշու թեմական դպրոցի տեսուչ Տիգրայր վարդապետին եւ ամբողջ ուսուցչական խումբը իրանց պաշտօններից անխոր, տեսչի ընտրութիւնը վերապահելով նոր հոգաբարձութեան, եւ ուսուցիչների ընտրութիւնը՝ նոր տեսչին: Նոյնպէս հեռագրով արձակեց Շուշու կոնստանդնուպոլիսի ներքից մընացած անդամ Սորէյի քահանայ Իսկանդարեանին եւ նրա տեղը նշանակեց Վահան քահանայ Շահունեանցին, ապագայ նոր փոփոխութիւնները նոր առաջնորդին թողնելով, որն արդէն ռաւադարված է ի հաստատութիւն:

Կոնստանդնուպոլիսի Եղուար թեմական թե-

մական զարդի ամբողջ ուսուցչական խումբը, անխոր, եւ ընդունելով ժամանակը լրացած հոգաբարձութեան հրաժարականը, հրամայեց Սուքիաս արքեպիսկոպոսին նոր ընտրութիւն կատարել, որ հոգաբարձութիւնն եւս ընտրելի տեսուչը եւ տեսուչն իր ուսուցչական խումբը: Երեւանի հոգաբարձութեան երկու անդամներն եւս քահանաներ պիտի լինեն, եւ հոգաբարձուներ (Թիֆլիսի, Շուշու եւ Երեւանի) պիտի հաստատվեն չորս տարվա ժամանակով:

Ազատ իրաւունք է տրված, ինչպէս լսելիքը, ընտրութիւնները կատարել զուտ ժողովրդական եղանակով եւ ազատօրէն:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երեւան, մայիսի 20-ին

Երեւան քաղաքում ս. Լուսաւորիչ եկեղեցու շինութիւնը աւարտելուց յետոյ բարոյական պարտք համարեցի ներկայացնել մի համառոտ հաշիւ ի գիտութիւն հասարակութեան: Հէնց այդ ժամանակ ընկաւ ձեռք «Մշակ» լրագրի 85-րդ համարում տպված նամակ Երեւանից Գ. ստորագրութեամբ, որը մասամբ վերաբերում էր նոյն եկեղեցուն: Ուստի եւս թէ հաշիւը եւ թէ մի թեթեւ պատասխան այդ նամակին վճռելի կցել միմեանց հետ եւ ինքնին ձեռք մի անկիւն չնորհելու «Մշակի» էջերում:

Երեւանի նորակառուց եկեղեցու շինութիւնը սկսվել է 1867 թվ. Նոյն թվականից մինչեւ 1874 թվ. հին հոգաբարձուները ծախսել են 5457 ռուբլի, իսկ 1874 թվ. մինչեւ 188 թվ. արքեպիսկոպոսը տասը տարի, կանգ առաւ միալիս է եղել 1884 թվ. ինձ վիճակից, որպէս հոգաբարձու այդ շինութեան շարունակել եւ իմ օրով, մինչեւ եկեղեցու շինութիւնը աւարտելը, եղել է ծախս 24642 ռուբլի 50 կոպէկ: Աչքի տալով պէտք է ունենալ, որ այդ գումարի մէջ մտնում է 2000 ռուբլու մի գումար, որ վերցված է իբրեւ պարտք քաղաքի չորս եկեղեցիներից: Ուրեմն այդ հոյակապ եկեղեցու վրա, որ այսօր գրաւում է շատերի ուշադրութիւնը, ընդամենը ծախսված է 30099 ռ. 50 կ. Մի թեթեւ հայեացք ձգելով այդ թիվ վրա, կարծես ամեն մի ընթերցող համոզված կը լինի, որ շատ չնչին գումարով է կառուցվել եկեղեցին: Իսկ մեզ, հոգաբարձուներին, փոխանակ շնորհակալութիւն յայտնելու, ձեռք թղթակցից հիւրասիրում է զանազան անտեղի ակնարկներով:

Նա ասում է թէ աղաները իբր թէ խռով են եւ եկեղեցու օծման օրը ներկայ չէին եկեղեցու օծման օրը մենք՝ հոգաբարձուներս, կոնստանդնուպոլիսի օրագրութեամբ արդէն հեռացած էինք մեր գործունէութեան ապարէզից, ուրեմն եւ որպէս ոչ հոգաբարձու, այլ իբրեւ մի մասնաւոր մարդ իրականաբար իրաւունք ունէր ներկայ լինել եկեղեցու օծմանը կամ չը լինել իսկ ինչ վերաբերում է նամակի այն կէտին, թէ իբրեւ աղաները, որոնցից մէկը, ի հարկն են պիտի լինեմ, խռոված էին, որովհետեւ եւրէյփոխ չէին ընտրված, այստեղ թող ներքի ինձ ասել, որ եւ 1891 թվ.ց մինչեւ ներքի 1900 թվականի Պօղոս-Պետրոս եկեղեցու եկեղեցու կրէյփոխ եմ եղել եւ այս տարի հրաժարվելուց յետոյ ժողովուրդը կրկին ցանկութիւն յայտնեց միաձայն կերպով ընտրելու ինձ բայց եւս հրաժարվելու, որովհետեւ պաշտօն վարել թող չէին տալիս ոչ իմ սեփական բազմակողմանի զբաղմունքներս, ոչ էլ ֆիդիքս:

Քաճմիներից երաժշտութեան դասեր վերցրում չվեղացի երաժիշտներ, որոնք նուազում են մի քաղաքի ետանդով, ասեւ նուազելով են տաւառում իրանց ցուրտ հայրենիքում, ձիւնապատ լեռների վրա, սառցապատ լճերի եզերքին: Կրկնում եմ, այս բոլորը դրաւիչ է եւ հետաքրքրի: Բայց ինչ ասել Պարիզի փողոցի մասին (La rue de Paris), ուր Պարիզի կենտրոնը խոտրած ներկայանում է հասարակութեան: Այժմ փողոցի երկու կողմերում շարված են գումարձութեան տեղեր, ուր տեղի են ունենում հեղափոխական պատկերներ յարուցանող ներկայացումներ, կենդանի պատկերներ եւ այլն: Բայց արանցից նման գումարձութեան տեղեր են «Վիտտիկը Պարիզում», «Անդալուզիան մաւրիկ ժամանակ», «Հին Պարիզը» եւ այլն: Երեւանի ժամի 6-ից յետոյ բուն ցուցահանդէսը փակվում է, բայց են մնում միայն այս գումարձութեան տեղերը եւ չը նայելով որ այդ ժամանակ մուտքը կրկնակի է դառնում, այնուհետեւ անհամար այցելուներն աւելի բազմաթիւ լինում քան ցերեկը:

Անա թէ ուր պիտի փնտռել ցուցահանդէսի աշխուժեան զաւտները:

Ցուցահանդէսն այցելելու համար այսօր Պարիզ հասաւ Շվեդիայի թագաւոր Օսկար II-ը: Կատարելութիւնն ու քաղաքի ազգաբնակչութիւնը մեծ պատիւներով ընդունեցին նրան: սա առաջին օգոստոսիաւ այցելուն է:

Ա. Ահարոնյան



կան օյժերս: Եւ այդ ի նկատի առնելով, նոյն կերպով ծխողները տուրք կընձ չորհակա-  
նակներն ուղերձ, իսկ հոգեւոր կառավարու-  
թեան կողմից առաջարկվեց պարգև:

Համարաձուռ Եղիազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այժմ վերջնականապէս սահմանվեցին այն  
օրերը, երբ թոյլ չէ տրուում թատրոնական ներ-  
կայացումներ տալ Ռուսաստանում: Արգելված  
օրերի թիւը ընդամենը 38 է տարվայ մէջ:  
Արգելված են ներկայացումներ մեծ պատի տ-  
նային, չորրորդ եւ եօթներորդ շաբաթների  
ընթացքում, Չատիկ առաջին եւ երկրորդ օ-  
րերում, Մանգոյան նախընթաց օրը: Նոյն սահ-  
մանափակումը տեղի ունի եւ ուրիշ հասարա-  
կական գուարճութիւնների վերաբերութեամբ:  
Մնացած օրերը ազատ են:

Առաջիկայ յուլիսի 1-ին Ստաւրոպոլի եւ  
Չեքոսլովանիայի նահանգներում մոյնվում է խը-  
մի չընկրի արք. Եւսէպի Կառնապոսով:  
Քիւրսկի միջնադպրոցի շէնքերը հրդեհ-  
վեցին: Մահացան 188  
մարդ:

«Съездъ Кургенъ» Լրագրի մէջ կարդում  
ենք. «Բազումի նախարարները հարկաւ  
տարեալ սահմանութեան հասցնելով Վոլգայի  
չափ չորհանապատեան նախապիւս վառելիքի  
գները բարձրացնելու պատճառով, սկսեցին չո-  
ղենաւեր եւ ուրիշ նաւեր բռնել Վոլգայի վրա:  
Ամենագործը քաջող չորհանաւեր արդէն գնել է  
«Մազուտ» նաւթարդիւնաբերական ընկերու-  
թիւնը, որի գլուխ կանգնած է Բաշկիրը»:

Ստացանք 1) Յ. Տէր-Միրաքեանի «Դե-  
ռասանների ազատ ընթերցանութիւնը» գիրքը,  
որ արտատպւած է «Մուրճ» ամսագրից: Գիր-  
քը բաղկացած է միջակ դիւրով 229 երեւոյց  
եւ արժէ 60 կոպէկ: 2) Նոր Զուլայի ազգային  
հիմնադրութեան «Համառոտութիւնը տա-  
րեկան հաշուի 1898 ամի», մեծագիր 36 երես:  
3) «Տեղեկագիր հոգաբարձութեան ազգային  
երկեսու ուսումնասիրաց Նոր Զուլայում»: 4)  
Կանոնագիր եւ տեղեկագիր Թաւրիզու Լաւա-  
նական ընկերութեան: 5) Տեղեկագիր եւ հա-  
շուեկիւն 1899—1900 տարեշրջանի Ասորկա-  
տական հայուհեաց բարեգործական ընկերու-  
թեան եւ 6) Годовой отчетъ о состояніи рус-  
ской публичной библиотекы въ г. Юрьевѣ  
за 1899 годъ.

ՇՈՒՇՈՒ գաւառից մեզ գրում են. «Անս 4  
ամիս է, ինչ մեր գիւղերում սաստիկ տարած-  
ված է երկխանքի մէջ կապուտ հազ (КОЖУШЬ)  
հիւանդութիւնը եւ մինչեւ օրս ոչ մի բժշկա-  
կան միջոց ձեռք չէ առնվում նրա դէմ: Միմէ  
ժամանակ չէ մեր գաւառական բժշկին մի ան-  
գամ յիշել մեր գիւղերը»:

Ջերբայէի գաւառի ԱՌԱՔԵՆԼ գիւղից մեզ  
գրում են. «Բոժոժի նորը դուրս է եկել, սա-  
կայն գնաղները, արտասահմանի առատ բերքի  
պատճառով, անցնելու տարվայ չէ, գինն են ա-  
ռաջարկում, այն է 8 ռ. պուդին: Տերեւի հի-  
ւանդութիւն կար այս տարի, որի շնորհիւ  
տերեւը պակաս էր եւ չափ թանձր»:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Այստեղ եկան  
դերասաններ Օսանեան եւ Յարութիւնեան եւ  
պատրաստվում են երեք հայոց ներկայացում  
տալ մերոջների ամսանախմբութեամբ, չուտով  
գալու է եւ դերասանուհի տիկին Մելիքեան:  
Դերասաններն այստեղից կը գնան՝ Յարսկի-  
Կիւրսկի, Վիլնայի, Լադոգայ, Թէլաւ եւ Զա-  
քաթալ» ներկայացումներ տալու: Պէտք է  
յուշաւ, որ հասարակութիւնը ամեն տեղ կը  
քաջալերէ դերասաններին, մասնաւորապէս որ հա-  
յոց դպրոցների փակվելուց յետոյ հայոց ներ-  
կայացումները գաւառներում դժուար են պա-  
տահուում»:

ԱՍՆԱԲԱՆԴԻՑ մեզ գրում են. «Անգրկա-  
պեան երկրի չորհրդի դեռ մարտ ամսից էին  
սկսվել, այժմ այն աստիճան են սաստկացել,  
որ անկարելի է լինում երեւնի ցերեկով փո-  
ղոց դուրս գալ: Երեւնի է, երբ փոքր ինչ  
քամի է փչում (այն էլ տաք)՝ Ասխարադի խնդ-  
րող փոշին եւ այդ դժոխային չորք իսկապէս  
սեւացնում են մարդու կեանքը: Անտանդի է  
հասար դասակարգի վիճակը, որը ոչ մի միջոց  
չունի քաղաքից հեռանալու: Տեղին հարուստ  
վաճառականները արդէն քաշվել են անարա-  
ւան»:

Նոյն եւ հանդիսատ կեանք են վարում, ազատ  
աֆրիկական չորհրդի, մինչդեռ իրանց խեղճ գոր-  
ծակատարները ամբողջ օրը նստած խանութում  
խորովում, տանջվում են: Նրանք օրվայ մէջ  
հանգստանում են ընդամենը 5 ժամ, իսկ մնա-  
ցած ամբողջ 19 ժամը շարունակ լինում են  
ոտի վրա: Ցանկալի կը լինէր, որ Ասխարադի  
վաճառականները գոնէ փոքր ինչ մտածէին ի-  
րանց խեղճ գործակատարների մասին եւ հեշտապ-  
նէին նրանց ծանր վիճակը, թոյլ տային նրանց  
ցերեկը, կէսօրից յետոյ, երբ առեւտուրի դա-  
ղարած ժամանակն է լինում, հերթով քնե-  
լու առնուազն երկու-երկու ժամ, որով ցոյց  
տուած կը լինէին իրանց բարեխղճութիւնը  
դէպի իրանց համար աշխատող շարժարկող-  
ները»:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Անցեալ շաբաթ  
տեղաց կարկուտ, որը մեծ վնաս հասցրեց թէ  
քաղաքին եւ թէ գիւղերի ցանքերին ու այգի-  
ներին: Առանձնապէս վնասվել են Անագա,  
Վաքիբի, Կարախանի, Մաշտարի գիւղերը:  
Կարկուտի հետ փչում էր զօրեղ քամի»:

Ջերբայէի գաւառի ԱՌԱՔԵՆԼ գիւղից մեզ  
գրում են. «Մեզ մօտ եկաւ Թիֆլիսի չերամա-  
պահական կայարանի վերաբերուող Անարոպո-  
լը, նա չերամի եւ գրենի վերաբերուող տեղե-  
կութիւններ է հաւաքում եւ օգտակար խոր-  
հուրդներ է տալիս»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Fortnightly Review» ամսագրի վերջին  
համարներից մէկում տպւած է մի յօդուած,  
որի մէջ մի շարք թւանշաններով ապացուց-  
վում է զինուորական սխառմի վերանորոգու-  
թեան անհրաժեշտութիւնը Անգլիայում: Բրի-  
տանական կայսրութիւնը, յօդուածի հեղինա-  
կի կարծիքով, կամ պէտք է պահպանէ իր  
թիւն ունեցող զինուորական սխառմը եւ դրա-  
նով դատաւարած իրան աստիճանաբար անկ-  
ման եւ անգործ գտնի արտաքին յարձակու-  
ման եւ ներքին ապստամբութիւնների առաջ,  
կամ պէտք է զինուորագրութիւնը մոյնէ եւ  
կայսրպանէ բրիտանական պրէստիճի եւ բրի-  
տանական յանձնը: «Ընտրութիւնը դժուար չէ»  
—բացականչում է հեղինակը:

—«Berliner Tageblatt» Լրագրի Պետերբուր-  
գի թղթակիցը գրում է. «Անգլիական այն տե-  
ղեկութիւնը, թէ չինական կայսրութիւնը իրան  
գրեց ուսուց դիւանագիտութեան հովանաւորու-  
թեան տակ, չէ հաստատում: Անհրաժեշտ է  
համարվում պատրաստ պահել Արեւելեան Սի-  
բիրի զօրքերը, որպէս զի նրանք կարողանան  
Չինաստան գնալ այն դէպքում, եթէ Պէկինի  
կառավարութիւնը անգործ գտնվի վերականգ-  
նել կարգը»:

—Բերլինի Լրագրի Պետերբուրգից  
հաղորդում են, որ «Times» Լրագրի առա-  
ջարկութիւնը, որպէս զի Անգլիան եւ Ռու-  
սաստանը միարան գործեն, այստեղ թոյլ  
արձագանք է գտնում: Ռուսաստանը պատ-  
րաստ է համարել գործել բոլոր պե-  
տութիւնների հետ առանց բացառութեան,  
բայց ամենեւին չէ ցանկանում կաշկանդել իր  
գործունէութեան ազատութիւնը որ եւ է ա-  
ռանձին համաձայնութեամբ Անգլիայի հետ:  
Առհասարակ Պետերբուրգում այն տեսակէան  
ունեն, թէ Ռուսաստանը կատարեալ իրաւունք  
ունի անկախ գործել Մանչուրիայում, բայց  
Չինաստանի ուրիշ կէտերում նա պատրաստ  
է ձեռք ձեռքի տուած գործել բոլոր պետութիւն-  
ների հետ:

—Այս օրերս Լոնդոնում լոյս տեսաւ «Հաստա-  
րակական կեանքը անգլիական զօրքի մէջ»  
վերնագրով մի գիրք: Հեղինակը, որ ինքն օ-  
ֆիցէր է, չափ լաւ նկարագրում է զինուորական  
եւ օֆիցէրների կեանքը եղանակը թէ ծառա-  
յութեան մէջ եւ թէ ծառայութիւնից դուրս:  
Անգլիական զինուորը չափազանց յարմար կեանք  
է վարում, իսկ ինչ վերաբերում է օֆիցէրնե-  
րին, չափ ցաւալի է այն հանգամանքը, որ օ-  
ֆիցէրները կարող են լինել միայն հարուստ կամ  
գոնէ ունեւոր ծնողների որդիք: Անգլիական  
որ զունը ուղում էք վերցրեք, օֆիցէրը  
պէտք է իր ընտանիքից ստանայ գոնէ 150  
ֆունտ ստերլինգ, իսկ հեծելազօր գնդերում  
օֆիցէրները պէտք է 600 ֆունտ ստերլինգ  
ստանան ծառայութեան հետ կապ ունեցող ի-  
րանց ծախսերը ծածկելու համար: Անգլիական  
զօրքի մէջ մարդու ընդունակութիւններին նը-  
շանակութիւն չեն տալիս, եւ յայտնի գնեցող  
Հէկտոր Մակգոնալդը, որ հառարակ գինւորից է  
սկսել իր ծառայութիւնը, այդ զօրքում հաղուա-  
գիւտ, եթէ չաւանք միակ բացառութիւն է կազ-  
մում: Այն ինչ այժմեան պատերազմը անկայտնի  
ապացոյց է այն բանի, թէ ինչ հետեւանքներ է  
լինում, երբ զօրքի մէջ գերակշռում են գին-  
ւորական ընդունակութիւններից զուրկ մարդիկ:  
—«Sémaphore» Լրագիրը հաղորդում է, որ  
Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների  
հաւատարմը, որ բաղկացած է 6 զրահակիր  
նաւերից եւ 5 կրէյսերներից, հասաւ Չիլի-

նիա եւ կը սկսէ ցոյց տնկու համար այցելել  
թիւրքաց բոլոր նաւահանդիսաները:  
—Այս տարի Մէլիկան այցելել են 222,000  
մասնագրական ուխտաւորներ: 34,000 Լրիմից,  
կովկասից եւ Թուրքիստանից, իսկ մնացածնե-  
րը Հնդկաստանից, Չինաստանից, Թիւրքիայից  
եւ Աֆրիկայից:

—«Իզգաւ Լրագիրը հաղորդում է, որ Աֆրի-  
կայի զանազան տեղերից մասնագրականները  
սուլթանին հաւատարմի հպատակութեան մի  
ուղերձ ուղարկեցին, որի մէջ պատրաստակա-  
նութիւն են լայնում խալիֆի գրօշակի տակ  
մտնել եւ գնալ այնտեղ, որտեղ նա նրանց կը  
հրամայի Սցդ առիթով «Իզգաւ» նկատում է:  
«Իւրաքանչիւր թիւրք հաւատացած է, որ եթէ  
իր փառչիւնի 1,500,000 զօրքը բաւարար չի  
լինի, նոյն քանակութեամբ զինւորներ կը դը-  
նեն իրանց խալիֆի արամպարութեան տակ  
մասնագրական աշխարհի ամեն ծայրերից»:

ԽՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Յուլիսի 27-ից մինչեւ օգոստոսի 1-ը նոր տօմարով  
Պարիզում կը կայանայ միջազգային կոնգրես էլէկտ-  
րականութեան եւ Ռէնտգենիան ճառագայթների բը-  
ժշկականութեան մէջ գործադրելու հարցի մասին:  
Կոնգրեսի պատուոյր ղեկավարները ընտրված են պրո-  
ֆէսորներ d'Arsonval, Althaus, Erb, Ռէնտգեն եւ ու-  
րիշները: Կոնգրեսի անդամները կը լինեն այն անձինքը,  
որոնք մինչեւ նիստերի բացումը կը գլխին կապակե-  
րուող յանձնաժողովի քարտուղարի մօտ (D-r A. Mou-  
tier, rue Miromesnil, 11, Paris). Անդամական վճար  
դրուած է 25 ֆրանկ, այնպէս որ կոնգրեսի բոլոր  
տպւած հրատարակութիւնները վճար տուողներին ձրի  
կուտարկեն:

Մայիսի 28-ին Բրիտանիոյ ուղղիչ դատարանում  
սկսվեց մի խալտառակ գործի քննութիւն: Այդ գործը  
սկսվել է արանափախուսն կառավարութեան զանգա-  
պատճառով, կառավարութիւնը մեղադրում է խաբե-  
րալուծեան մէջ Ֆրանս-բէլգիական ընկերութիւնը,  
որը Սեյեստի-Նոմատի-Պարտ երկաթուղական գիծ էր  
անցկացնում Տրանսպարան: Տրանսպարան կառա-  
վարութեան խօսքով, վերջինեալ ընկերութեան ներ-  
կայացուցիչները ներկայացրին իրան անձիւր հաշի-  
ւներ, ցոյց տալով, որ ճանապարհի իւրաքանչիւր մո-  
նի շինութիւնը նոսրեց 9,600 ֆունտ ստերլինգ, այն  
ինչ իսկական արժողութիւնը միայն 7,200 ֆունտ էր:  
Այդ գումարների մէջ եղած զանազանութիւնը մնաց  
ընկերութեան ղեկավարների գրաւաններում: Փառն-  
բէլգիական ընկերութեան ղեկավարները իրանց կող-  
մից լայնեցին, որ ծախսերը նշանաւոր կերպով ա-  
նցին այն պատճառով, որ ընկերութիւնը ստիպւած  
էր կայսրաքանի տալ Կրիզելիին, ֆոլկլորապի անդա-  
մներին եւ ուրիշներին: Մեղադրանքները նստարանի  
վրա նստած էին վեց անձինք՝ Օպպէնհէյմ, երկու եղ-  
բայրները, Վարնան, երկու եղբայրները, Բրաւնիէ եւ  
Տէրվան: Մեղադրվողների պաշտպանութիւնը լանձն  
ստան Պարիզի մի քանի լայտի փաստաբաններ, նոյն-  
պէս եւ Բելգիայի հաշակաւոր փաստաբաններ, որոնց  
թիւում Գրո, Վաւա եւ ուրիշները: Նիստը բացվելուց  
յետոյ պաշտպաններից մէկը, Գրո, պահանջեց գործի  
քննութիւնը լեռնաձիւր, որովհետեւ անհրաժեշտ է կան-  
չել Տրանսպարանի մի շարք վիճակներ, որոնք կարող  
են հաստատել, որ կառավարութեան եւ պարլամենտի ան-  
դամները կայսրաքանի էին վերցնում նա կարողաց  
Կրիզելիին, գնեցրալ Սմիտին եւ ուրիշներին տուած  
կաշառքների եւ ընծաների մի երկար եւ մանրամասն  
ցոյցալ: Գոտարանը միթեց Գրոի պահանջը, մինչեւ  
որ հարցուողների չենթարկել ներկայ եղող վիճակը:  
Սակայն հարցուողների չենթարկեց Օպպէնհէյմի ներ-  
կայացուցիչ Վորտեր Պրետորիայում, որը հաղորդեց,  
թէ ինքն ֆոլկլորապի 22 անդամներից կառեւ ըն-  
ծալից: Երկրորդը հարցուողների ենթարկեց զօրուր  
Լէյզու: Նա լայտեց, թէ ինքն չէ լսել ոչ մի ընծայի  
մասին, բացի Կրիզելիի պատկերից, որ Վորտեր  
պարզ էր ուղարկել արանափախուսն կառավարու-  
թեանը:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

7 յունիսի

ԼՕՆԴՈՆ. Հօնկոնդից հաղորդում են, որ  
«Մեծ բուռնցք» խմբի շարժումը տարած-  
վում է Արեւմտեան գետի երկարութեամբ:  
ՊՍԻԶ. Արտաքին գործերի մինիստրու-  
թեան մէջ օչնչ նոր տեղեկութիւններ չեն  
ստացվում:

ԲԵՐԼԻՆ. Զիֆուի գերմանական հիւպատոսին  
հրամանագրվում է շտապով յարաբերութիւն  
հաստատել կրէյսերեան նաւատորմի հրամանա-  
տարի հետ՝ նաւային պօստ հիմնելու համար  
Տակուի եւ Զիֆուի միջեւ:

ԲԵՐԼԻՆ. «Breath Northern» հեռագրական ըն-  
կերութիւնը տեղեկացրեց միջազգային բիւ-  
րօին, որ նա, միացեալ նաւատորմի աշակցու-  
թեամբ, շուտով մշտական հեռագրական հա-  
ղորդակցութիւն կը հաստատի Տեանցիլի,  
Տակուի եւ Զիֆուի միջեւ:

ԲԵՐԼԻՆ. Կայսրի հրամանով, ծովային երկու  
բատալիոնների թիւը կը հասցնվի պատերազ-  
մական դրուելեան թիւին, պատրաստվելով Զի-  
նաստան դնալ:

ՇԱՆԳՀԱՅԱ. Արժանահաւատ են համարում  
այն տեղեկութիւնը, որ միսսիսները Պէկինում

չեն մնալիկ եւ որ ծովային Սէյմուր օտար  
պետութիւնների զօրքերի հետ հասաւ Պէկին:  
ԼՕՆԴՈՆ. Շանգհայից հեռագրում են, որ  
Տակու գրաւելուց առաջ եղած կուր մէջ,  
սպանված են մարտիկները 700 չինացիներ  
եւ 100 զերի են առնված. ուսմանը եւ զեր-  
մանացիները գրաւեցին չինական «Ուալիանգ»  
նոր կրէյսերը:

ՎԻԵՆՆԱ. «Polit. Corresp.» հաղորդում է,  
թէ այն լուրը, որ իբր թէ Անգլիան խորհուրդ  
է տուել Իտալիային օգուտ քաղել խոսիւ-  
թիւններից՝ մի որ եւ է կէտին տրեւու հա-  
մար Չինաստանում, պաշտօնապէս հերքվում է:  
ԿԻԵՎ. Վախճանից միտրոպոլիտ Իօնիկի  
ԿԻՕՆՇԱՍ. Չինուորական եկեղեցում իշխա-  
նութիւնների ներկայութեամբ հոգեհանգիստ  
կատարվեց սպանված զինուորականների համար  
եւ զոհացողական մաղթանք՝ նաւատորմին  
պարգևած յաղթութեան համար Տակուի մէջ:  
ԼՕՆԴՈՆ. Գամմօնից հաղորդում են, որ  
բօէրների բաղմաթիւ զօրքեր կենտրոնացած են  
Բէնգիլի զօրքի դէմ, ձգտելով անցնել հարաւա-  
յին ուղղութեամբ, զօրքերի գլուխ գտնվում են  
Դէվիլիէ, Գրեմանտոն եւ Շոէյն, նախագահի  
եղբայրը, որը նոյնպէս զօրքի մէջ է գտնվում:  
Օրանսեան հանրապետութեան մայրաքաղաքը  
այժմ Բէթլէյնն է. բօէրների զլխաւոր բանա-  
կը փոխադրված է Ֆիկսբուրցին աւելի մօտ:  
Բօէրները ռմալուծում էին անգլիական բանա-  
կը Ֆիկսբուրցի մօտ: Տրանսպարան բօէրները  
յետ են քաշվում Բուլգէրի առեւեց եւ միա-  
նում են Օրանսեան բօէրների հետ:

ՕԼԴԵՆԲՈՒՐԳ. Տեղի ունեցաւ մեծ դքսի  
թաղումը, ներկայութեամբ գերմանական կայս-  
րի, Օլդենբուրգեան պրինցի եւ ուրիշների:  
8 յունիսի  
ՇԱՆԳՀԱՅԱ. Երկաթուղիական տեսիլից սուր-  
հանգակի բերած տեղեկութիւնը հաստատում  
է այն լուրը, որ ծովային Սէյմուր օտար  
զօրքերի հետ միասին յունիսի 17-ին մտաւ  
Պէկին: Մանրամասնութիւններ չը կան կո-  
րուսանների եւ դրուելեան մասին Պէկինում:  
ԼՕՆԴՈՆ. Պրիսիուից հեռագրում են, որ  
արեւմտեան-եւրոպական զօրքերի զօրաբաժի-  
նը, Վիլսոնի հրամանատարութեամբ, Կիօվայից  
դէպի Կլիսսու տանող ճանապարհի վրա յար-  
ձակման ենթարկվեց Էստէնկլանայի մօտ Թըշ-  
նամին շարք կրեյ: Վիլսոնի զօրքից սպանվե-  
ցին 10 մարդիկ եւ վիրաւորվեցին 24 հոգի:

ՏԱՆԺԻՐ. Սուլթանի ներկայացուցիչը եւրօ-  
պական ներկայացուցիչների ուղադրութիւնը  
դարձրեց այն բանի վրա, թէ Ֆրանսիական  
զօրքերը մտադրութեան ունեն գրաւել Մարոկ-  
կօի ցամաքը:

ՎԻԵՆՆԱ. Մովային վարչութիւնը հրաման  
արձակեց՝ պատրաստել կրէյսերների առաջին  
զօրաբաժինը Չինաստան ուղարկելու համար:  
Տակուի մէջ գտնվող մարտանաւը մնում է  
այնտեղ եւ կը միանայ կրէյսերեան զօրաբաժ-  
նին:

ԼՕՆԴՈՆ. Բօէրտս հաղորդում է Պրէտո-  
րիայից, որ Գէնտերի առաջապահ գունդը յու-  
նիսի 5-ին գրաւեց Կրիզելիստոյ առանց դի-  
մադրութեան եւ յունիսի 6-ին շարքեց բօէր-  
ների զօրքը Նիւստիան Դէվիտի առաջնորդու-  
թեամբ:

ԳԵՅԼԻՐՈՆ. Դէտտոնի հեծեալ հետեւակ  
զօրքը երկու թնդանթ լույց Դիւպլէսի հրա-  
մանատարից: Երկաթուղային եւ հեռագրական  
հաղորդակցութիւնը կապաւորուի հետ վերա-  
կանգնված են: Եօսաննիստրուդում մտադրին-  
ները բաց են:

ԼՕՐԵՆՑՈ-ՄԱՐԿԵՉԷ. Ամերիկական կապի-  
տան Լուսերդ, որ ծառայում է բօէրական  
թնդանթաձիգ զօրքի մէջ, եկաւ այստեղ եւ  
հաղորդեց, որ պատերազմական նիւթեր պատ-  
րաստող արանափախուսն գործարանը այժմ  
գտնվում է Լէյզելբուրգում: Դէվիտ ունի 600  
մարդ Օրանսեան զօրքերից, Բոտա—2500  
արանափախուցիչներից. բացի դրանից 1500 մարդ-  
կանցից փոքր զօրաբաժիններ են կազմված:

ՐՕՍՏՈՎ ԴՈՆԻ ՎՐԱ. Հայանատիկները Հիւ-  
սիսային Կ



Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.